ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2024-10-2-Ա

ք. Երևան 09.10.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի հոկտեմբերի 9-ի նիստում քննարկեց 2024 թվականի օգոստոսի 22-ին Ազատ Ադամյանի (ՀՀ, Երևան, Ադոնցի 6/1, տարածք 54, AM) ներկայացուցիչ Մանուշ Եսայանի կողմից ներկայացված «BARDAK» (No20232514) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, ինչպիսիք են, օրինակ, այն նկարները, պատկերները, բառերը կամ բառային արտահայտություններն և դրանց համակցությունները, որոնց տեսքը, բովանդակությունը կամ իմաստը հակասում են հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, որպես ապրանքային նշան, քանի որ բաղկացած է «BARDAK» բառից, և հայ սպառողի համար անկախ լատինատառ գրելաձևից, այն ընկալվում է «бардак», որն էլ բացի խառնաշփոթ իմաստից կրում է նաև հասարակաց տան իմաստը՝ https://ru.wikipedia.org/wiki/%D0%91%D0%BE%D1%80%D0%B4%D0%B5%D0%BB%D1%8C_(%D0%B7%D0%BD%D0%B0%D1%87%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F)#:~:text=%D0%91%D0%BE%D1%80%D0%B4%D0%B5%D0%BB%D1%8C%20%E2%80%94%20%D0%BF%D1%83%D0%B1%D0%BB%D0%B8%D1%87%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%B4%D0%BE%D0%BC.,)%20%E2%80%94%20%D1%86%D0%B0%D1%80%D1%8F%D1%89%D0%B8%D0%B9%20%D0%B1%D0%B5%D1%

81%D0%BF%D0%BE%D1%80%D1%8F%D0%B4%D0%BE%D0%BA%2C%20%D1%85%D0%B0%D0%BE%D1%81: Ինչպես նաև ցանկանում ենք հայտատուի ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ ապրանքային նշանի գրանցումը խնդրարկվել է Հայաստանի Հանրապետության տարածքում և հայ սպառողի լեզվամտածողությամբ «BARDAK» գրառումը առանց երկմտելու կունենա ռուսերեն «бардак» բառի ընկալումը: Հետևաբար, նման ապրանքային նշանի գրանցումը և օգտագործումը հարիր չէ մեր հասարակության բարոյականության սկզբունքներին:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին, ինչպիսիք են, օրինակ, այն նկարները, պատկերները, բառերը կամ բառային արտահայտություններն և դրանց համակցությունները, որոնց տեսքը, բովանդակությունը կամ իմաստը հակասում են հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին: Տվյալ դեպքում հայտարկված նիշի գրանցումը ենթակա է մերժման, որպես ապրանքային նշան, քանի որ բաղկացած է «BARDAK» բառից, և հայ սպառողի համար անկախ լատինատառ գրելաձևից, այն ընկալվում է «бардак», որն էլ բացի խառնաշփոթ իմաստից կրում է նաև հասարակաց տան իմաստը:

Բողոքարկողի ներկայացուցիչը պնդում էր, որ բողոքը պետք է բավարարվի:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Ներկայացուցիչ Մանուշ Եսայանի կողմից ներկայացված Ազատ Ադամյանի «BARDAK» (No20232514) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ